ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

ուշադրության առնելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածքում անդրազգային կորպորացիաների ձեւավորումը,

կարեւոր նշանակություն տալով աշխատանքային հարաբերությունների եւ սոցիալական գործընկերության, քաղաքացիների սոցիալական պաշտպանության ապահովման, նրանց աշխատանքի պահպանության եւ պայմանների բարելավման բնագավառում համագործակցության զարգացմանը,

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածքում անդրազգային կորպորացիաներում սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմի ստեղծման նպատակով, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը անդրազգային կորպորացիաներում (այսուհետ՝ կորպորացիա) ապահովում են սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կարգավորումը միջպետական եւ միջկառավարական համաձայնագրերի, կորպորացիայի մասնակից ձեռնարկությունների եւ կազմակերպությունների տեղակայման վայրի պետությունների օրենսդրության, ինչպես նաեւ այդ ձեռնարկություններում եւ կազմակերպություններում կնքվող կոլեկտիվ պայմանագրերի եւ/կամ կորպորացիայում կնքվող պայմանագրի (համաձայնագրի), այսուհետ՝ (պայմանագրեր) հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 2

Պայմանագրերի մշակման եւ կնքման առնչությամբ բանակցությունների (խորհրդակցությունների) մասնակիցներ են հանդիսանում կորպորացիայի բարձրագույն կամ նրա կողմից լիազորված գործադիր մարմինը եւ աշխատողների ներկայացուցչական մարմինը (կորպորացիայի մասնակից ձեռնարկությունների եւ կազմակերպությունների արհմիութենական կոմիտեների խորհուրդը, կամ միասնական արհմիութենական կոմիտեն, եթե այդպիսին ստեղծված է, աշխատողների այլ ներկայացուցչական մարմին):

ՀՈԴՎԱԾ 3

Կորպորացիայի բարձրագույն կամ նրա կողմից լիազորված գործադիր մարմնի եւ աշխատողների ներկայացուցչական մարմնի միջեւ բանակցությունները (խորհրդակցությունները) անցկացվում են այն պետության ազգային օրենսդրության նորմերին համապատասխան, որի տարածքում գտնվում է կորպորացիայի բարձրագույն կամ նրա կողմից լիազորված գործադիր մարմինը:

Բանակցությունները (խորհրդակցությունները) անցկացվում են դրանց մասնակիցների համագործակցության, շահերի փոխադարձ հարգանքի եւ իրավահավասարության ոգով:

ՀՈԴՎԱԾ 4

Պայմանագրի բովանդակությունը եւ կառուցվածքը սահմանվում է բանակցությունների (խորհրդակցությունների) մասնակիցների կողմից: Պայմանագրերում կարող են ընդգրկվել գործատուի եւ աշխատողի փոխադարձ

պարտավորությունները.
աշխատանքի պայմանների եւ վարձատրության հարցերով,
սոցիալական զարգացմանն ուղղված՝ շահույթի մի մասի օգտագործման հարցերով,
ձեռնարկության կամ կազմակերպության լուծարման, վերակազմավորման, գործունեության դադարեցման հետեւանքով աշխատանքային տեղերի կրճատման դեպքում՝ աշխատողների համար սոցիալական երաշխիքների սահմանման հարցերով,
լրացուցիչ սոցիալական եւ կենսաթոշակային ապահովագրության ապահովման հարցերով,
այլ սոցիալական հարցերով:
Բանակցությունները (խորհրդակցությունները) անցկացվում են առնվազն տարին մեկ անգամ:

ՀՈԴՎԱԾ 5

Կորպորացիայի բարձրագույն կամ նրա կողմից լիազորված գործադիր մարմինը.
տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն կորպորացիայի ցանկացած մասնակցի աշխատողների ներկայացուցչական մարմնին՝ բանակցությունների (խորհրդակցությունների) անցկացման, պայմանագրերի կնքման համար,
աշխատողների շահերը շոշափող արտակարգ իրավիճակներ առաջանալիս՝ օպերատիվ կարգով տեղեկացնում է այդ մասին աշխատողների ներկայացուցիչներին՝ անհետաձգելի խորհրդակցություններ անցկացնելու համար:
Բանակցությունների (խորհրդակցությունների) մասնակիցները, բանակցությունների (խորհրդակցությունների) հետ կապված այլ անձինք իրավասու չեն հրապարակելու ստացված տեղեկատվությունը, եթե այն հանդիսանում է ծառայողական կամ առեւտրային գաղտնիք:

ՀՈԴՎԱԾ 6

Աշխատողների ներկայացուցչական մարմնի անդամներին, բանակցություններին (խորհրդակցություններին) մասնակցելու ընթացքում, անկախ դրանց անցկացման վայրից, գործատուն տրամադրում է երաշխիքներ եւ փոխհատուցումներ, որոնք նախատեսված են կոլեկտիվ բանակցություններում մասնակցող անձանց համար՝ գործատուի գտնվելու վայրի պետության ազգային օրենսդրությամբ:

ՀՈԴՎԱԾ 7

Այն դեպքում, երբ գործատուին ներկայացնող անձը խուսափում է սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածով նախատեսված բանակցություններ (խորհրդակցություններ) անցկացնելուց, նրա նկատմամբ կիրառվում են պատասխանատվության միջոցներ, որոնք նախատեսված են այն պետության ազգային օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է կորպորացիայի բարձրագույն կամ նրա կողմից լիազորված գործադիր մարմինը: Մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու գործերը քննության են առնվում կորպորացիայի աշխատողների ներկայացուցչական մարմինների, կորպորացիայի մասնակից ձեռնարկությունների եւ կազմակերպությունների, ինչպես նաեւ արհմիությունների եւ դրանց միավորումների հայտարարությամբ կամ դատախազի նախաձեռնությամբ:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագրի իրականացման նկատմամբ հսկողությունը դրվում է Կողմերի աշխատանքի եւ քաղաքացիների սոցիալական պաշտպանության հարցերով զբաղվող պետական
մարմինների վրա:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, իսկ այն պետությունների համար, որոնց օրենսդրությունը պահանջում է ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարում՝ ավանդապահին համապատասխան
փաստաթղթերի հանձնման օրվանից:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագրի մեջ Կողմերի ընդհանուր համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ:
Փոփոխությունները եւ լրացումները ձեւակերպվում են առանձին արձանագրություններով եւ ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածով նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

ՀՈԴՎԱԾ 12

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց առնվազն վեց ամիս առաջ դրա մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագիրը բաց է միանալու համար այլ պետությունների կողմից, որոնք կիսում են դրա նպատակները եւ սկզբունքները:

Կատարված է Բիշկեկ քաղաքում 1997 թվականի հոկտեմբերի 9-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2000 թվականի նոյեմբերի 9-ից: